

ՎԱՍՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ՀԱԿԱԹՈՌԻ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Վերջերս Անթիլիասի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դիւանը հրապարակել է անթուակիր մի դրութիւն՝ ի մասին «Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ» տիտղոսի գործածութեան, որն ըստ ձեւի եւ ըստ բովանդակութեան, մի նոր յարձակողական ելոյթ է Սուրբ Էջմիածնի եւ Հայոց Ընդհանրական Հայրապետութեան դէմ: Իրողութիւնները ամբողջապէս չբնութագրելով, Անթիլիասի շարադրանքը փորձում է պնդել թէ,

1. «Քաղաքական ու հատուածական նկատառումներով» պայքար է մղուած Անթիլիասի Աթոռի դէմ, սփիւռքի ազգային-եկեղեցական կեանքից ներս «նոր տարակարծութիւն եւ չփոթ ստեղծելու», այդ Աթոռն «անշքացնելու» եւ «պարզ փանահայրութեան մը վերածելու համար»:

2. «Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ» մակդիրի գործածութիւնը կիլիկեան կաթողիկոսների կոնդակների սկզբնաւորութեան մէջ «ունի իր անցեալը»:

3. Անթիլիասի զահակալները «այդքան նուիրական եւ պատմական յիշատակ մը չեն կրնար եւ արտօնուած ալ չեն ջնջել», հետեւաբար, «թող այս մասին ո՛չ ոք վէճ բանայ, ո՛չ խօսքով եւ ո՛չ ալ զրէով, զուր է, անտեղի է, անխմաստ է»:

Խմբագրութիւնն չի կարող խեղաթիւրուածով շարադրուած այս գրութեան կողքով անցնել:

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, Մայր Աթոռի դիւանը իր Նոյեմբեր 30 1973 թուակիր պաշտօնական յայտարարութեան մէջ («Էջմիածին» ամսագիր, 1973, Նոյեմբեր, էջ 30), յանուն Ամենայն Հայոց Հայրապետի, իր գիրքը ճշգրիտ էր շեշտելով, այս առթիւ,

1. Թէ՛ «Անթիլիասի Տանն Կիլիկիոյ դիւանի վերջերս հրապարակած անթուակիր շարադրանքը, ի մասին «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսի գործածութեան, փարիսեցիաբար խմբագրուած մի փաստաթուղթ է, որ մի անգամ եւս քողաղբերում է այդ Աթոռի այժմու պառակտիչ ոգին՝ ընդդէմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի»:

2. «Պատմութիւնից յայտնի է, թէ վերոյիշեալ շարադրանքի մէջ յիշատակուած մի քանի ապօրինութիւնները մեր եկեղեցու կողմից մերժուած եւ դատապարտուած արարքներ են եղել, արարքներ, որոնցով լուի տեղական իրաւասութիւններ ունեցող կիլիկեան զահակալներից ոմանք, մղուած ստորակայութեան բարդոյթներից, փորձել են երբեմն օգտագործել «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսը՝ հակադրուելով Հայոց Ընդհանրական Հայրապետութեան, որ ի Ս. Էջմիածին, երբեմն էլ՝ Ս. Երուսաղէմի ու Կ. Պոլսի պատմարկութիւններին»:

3. «Շատ ուշագրտաւ եւ ինքնին պերճախօս է, որ Անթիլիասի շարադրանքի մէջ յիշատակուած կիլիկեան վեց զաւակայինքի օգտագործած տխրողուներից ոչ մէկը միւսին չի նմանում, տխրողսներ, որոնք չեն օգտագործուել կիլիկեան միւս կաթողիկոսներէ կողմից»:

4. Մայր Աթոռի դիւանի «Յայտարարութիւն»-ի մէջ Հարց է տրուած, թէ «Անթիլիասի ներկայ զաւակայլ ինչո՞ւ է հետեւում մի քանի օրինազանց կիլիկեան կաթողիկոսներէ օրինակին եւ չի հետեւում նոյն Աթոռի օրինապահ կաթողիկոսներէ օրինակին, որոնք ճշող մեծամասնութիւն են կազմում»:

5. «Անցեալում կատարուած մի քանի անկարգութիւններ երբեք չեն կարող արդարացնել նոր անկարգութիւններ»:

6. «Անթիլիասական շարադրանքի մէջ սպրդած է, սակայն, մի ճշմարիտ դատողութիւն, այն է՝ «...իւրաքանչիւրը իր պատմական տեղը եւ իր ծառայութեան կալուածը եւ դերը ունի»: Այո՛, այդպէս էլ պէ՛տք է լինի: Որով, Մայր Աթոռ հրաւիրում է կիլիկեան Աթոռը, որ յարդի այս սկզբունքը, թէ՛ կաթողիկոսական տխրողսի օգտագործման եւ թէ՛ իրաւասութեանց սահմաններէ տեսակէտից՝ ի սէր վերականգնման մեր մայր եկեղեցու միութեան եւ ներքին խաղաղութեան:

Այլապէս նրա խօսքը, առանց գործի, մնում է կեղծ ու մեռեալ»:

7. «Անթիլիասի հրապարակած նոր այս շարադրանքը դալիս է մի անգամ եւս ապացուցելու, թէ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Հանդէպ նա անշուք կերպով մնում է հակաթոռի դիրքերի վրայ»:

Արժան եւ իրաւ:

«Ամենայն Հայոց Կաթողիկոս» տխրողսի ապօրէն օգտագործումով, Անթիլիասի Աթոռը եւ Տ. Տ. Խորէն Կաթողիկոսը մի անգամ եւս հրապարակով հակադրում են Ս. Էջմիածնին ու Ամենայն Հայոց Հայրապետութեան, որո, ծանր կացութիւններ ստեղծելու համար սփռուքի հայ եկեղեցու ծոցում մեր ժամանակի այս փափուկ պայմաններում, երբ բոլորս այնքան կարիքն ունենք ներքին խաղաղութեան եւ միութեան վերականգնման:

Հակապատմական եւ հակահայտնական է կիլիկիայի կաթողիկոսներէց սմանց անուանց վրայ «Ամենայն Հայոց Կաթողիկոս» տխրողսի յաւելումը, ինչպէս նաեւ «Խաւասարագորութեան ցորաքոյս տեսութիւնը, որով փորձ կ'ըլլայ հայ եկեղեցին եւ ցուրապետութիւնը վերածելու երկզիսմանի մարմնի մը, Անթիլիասի Աթոռը Խաւասարագոր ցիպտիով Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռին եւ «Ամենայն Հայոց» տխրողսը աւելցնելով կիլիկեան կաթողիկոսի անունին», որում է Հայոց Հայրապետը 1968 թուականի Հոկտեմբեր 21 թուակիր նամակում Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսին («Էջմիածին», 1970, թիւ 2-է, էջ 16):

Խմբագրութիւնս անհրաժեշտ է դնում անդրադառնալ Անթիլիասի դիւանի նոր շարադրանքին, եւ մատենագրական վկայութիւններով ու պատմական փաստերի հիման վրայ ցոյց տալ, թէ ի՞նչ է «Տանն Կիլիկիայի Կաթողիկոսութիւնը», ի՞նչ են նրա տեղն ու իրաւասութեան սահմանները հայ եկեղեցու նուիրապետութեան ծոցում եւ ինչո՞ւ է կայանում Անթիլիասի շարադրանքի մէջ առաջ քաշուած սխալ եւ մերժելի տեսութեան հակապատմականութիւնն ու հակահայտնականութիւնը:

ՄԿՋԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԵԱՆ ԱԹՈՌԻ

Մեր եկեղեցին հանդուրժել է, պատմական զէպեքերի բերումով եւ ժամանակի պարապրանքով, տեղական ինքնավարութեան վրայ հիմնուած մասնաւոր կաթողիկոսական երկու Աթոռներին՝ Աղթամարի (1116—1895) ու Սիւրի (1446—1973) գոյութեանը՝ որոնք, սակայն, անկախ միաւորներ չեն եղել, այլ անբաժանելի մասերը հայ եկեղեցու նուիրապետական կառոյցին։ Այս Աթոռներին իւրաքանչիւրի իրաւասութիւնը տարածուել է իրեն համար սահմանուած թեմերի վրայ։ Եւ ամէն անգամ երբ տեղական այդ Աթոռներից մէկը փորձել է դուրս գալ իր սահմաններից, այդ քայլը համարուել է միշտ որպէս բացայայտ հերձուածող հակականոնական արարք եւ դատապարտուել է։

1441 թուականին Ս. Էջմիածնում գումարուած օգինաւոր ազգային—եկեղեցական սրբազումար ժողովի 300 պատգամաւորների միաձայն որոշումով եւ «եկեղեցական կանոններու եւ ազգային իրաւունքներու հիման վրայ» (Մաղաքիա Արքեպօ. Օրմանեան, «Ազգապատում», Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2108) Հայրապետական Աթոռը Սահյ փոխադրուեց իր բնիկ եւ պատմական կենտրոնը՝ Ս. Էջմիածին, որտեղից հետոյ էլ 484ին, երբ «Սիւրի Կիլիկիոյ երբեմնի շեղ մայրաքաղաքը այլեւս որեւէ հրապոյր չունէր կեդրոն մը ըլլալու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան» (Բարդէն Աթոռակից Կաթողիկոս, «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ», Անթիլիաս, 1939, էջ 1127), որովհետեւ «ժողովուրդը զաղթած եւ պանծալի մայրաքաղաքը Իսլամ բռնութեանց ներքեւ ճգնուած էր եւ չէր կրնար կեդրոն ըլլալ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան» (Բարդէն Կաթողիկոս, անդ, էջ 1188) եւ «Կիլիկիոյ մէջ ընդհանրապէս եւ մասնաւորաբար Սիւրի մէջ կատարեալ ողջակիզում մըն էր կաթողիկոսներուն պաշտօնավարութիւնը, կործանեալ եւ Հայութենէ զրեթէ թափուր մայրաքաղաքին մէջ» (Բարդէն Կաթողիկոս, անդ, էջ 1210)։ Ահա այդ ախուր օրերին, Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածին փոխադրութեանից հինգ տարի յետոյ, 1446ին, ոմն Կիրակոս քահանայ, «երէց մի աշխարհիկ», ըստ վկայութեան ժամանակակից պատմիչ եւ զէպեքերի ականջաւոր եւ ականատես Թովմա Վարդապետ Մեծօփեցու, «մասն հակառակութեան»... «զիմեաց առ ամիրայն Կիլիկիոյ, որ էր ընդ իշխանութեամբ Սուլտանին Եդիպտոսի, խոտաղեալ վճարել նմա ամի ամի երեք հարիւր դեկան եւ էառ ի նմանէ զիշխանութիւն Կաթողիկոսութեան Սսոյ» (Հ. Մ. Չամչեան, «Հայոց Պատմութիւն», Վենետիկ, 1784, հար. Գ, էջ 491)։

Ժէ դարի ժամանակաշրջանի Գրիգոր Վարդապետ Դարանաղեցին (1576—1643, «Ժամանակագրութիւն», Երուսաղէմ, 1914, էջ 310), նոյնպէս վկայում է, որ Կիլիկիայի մի քանի եպիսկոպոսներ որոշել էին բաժանուել Ս. Էջմիածնից եւ «եղին իւրեանց ինքնազուլիս կաթողիկոս», մինչ Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածին փոխադրուելուց յետոյ ազգի եւ եկեղեցու կամքով եւ որոշումով Սսում ճնոր կաթողիկոս մը պիտի չընտրուէր, քանի որ անդին Էջմիածնի մէջ կաթողիկոսական Աթոռը վերահաստատուած էր եւ նոր կաթողիկոս մը ընտրուած եւ կ'երեւի թէ ոչ միայն ինքն Մուսաբեկեան (Սսում նրատաւ վերջին Ամենայն Հայոց Կաթողիկոսը — ծնթ. խմբ.), այլ նաեւ Կիլիկիոյ եկեղեցականութիւնը ունէին ա'յդ հասկացողութիւնը» (Բարդէն Կաթողիկոս, անդ, էջ 1213)։

Եւ ահա 1446 թուականին, «մասն հակառակութեան» ընդդէմ Էջմիածնի եւ «մասն ապստամբութեան» ընդդէմ Ամենայն Հայոց Հայրապետութեան, որ ի Ս. Էջմիածին, Սսում եւ ստեղծում էր հակաթոռ մի կաթողիկոսութիւն։

Որով Կիլիկեան այս կաթողիկոսութիւնը իր սկզբնաւորումով փաս-

տական «հերձուածող կաթողիկոսութիւն» էր եւ կանոնական գետնի վրայ՝ հակաթոռութիւն, եւ երբեք իրաւական նախադրանք չի արժանացել Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տղային-եկեղեցական որեւէ ժողովական որոշումով:

Հետագայում սակայն, Մայր Աթոռը եւ Հայաստանեայց Եկեղեցին ու ազգը, ժամանակի տիրող քաղաքական որոշ պայմանների բերումով, պարզապէս հանդուրժել են այդ անկարգութիւնն ու հակաթոռութիւնը, այն բարձր նստումով, որ «ժամանակը բերաւ եւ ժամանակն ալ կը տանի... Սիրբ... հակաթոռութեան կերպարանքի ներքեւ սկսաւ, բայց օրինաւորութեան կերպարան առած է, սկիզբէն իրեն դէմ մէկու շարունակովը...» (Օրմանեան, անդ, էջ 244—244.5):

Կիլիկեան կաթողիկոսների պատմութիւնը զրոգ Բարդէն Կաթողիկոսը եւս, քննութեան առնելով Սսի կաթողիկոսական Աթոռի կանոնականութեան հարցը, գրում է.

«Կիլիկիոյ կաթողիկոսական Աթոռին կանոնականութիւնը պաշտպանելու համար միշտ պատմական սխալ բացատրութիւններ եւ փաստեր առաջ քաշուած են անկախ՝ թէ՛ նոյնինքն Կիլիկիոյ հին եւ նոր կաթողիկոսներու կողմէն եւ թէ՛ Կիլիկիոյ Աթոռը պաշտպանելու կողմէն ընդդէմ ատոր հակառակ էջմիածնի կաթողիկոսներուն եւ ընդդէմ նաեւ անոնց ջատագովներուն...»:

Անոնք որ ըսին Կիլիկիոյ Աթոռը ուղղակի Ս. Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսական գիծին շարունակութիւնն է կամ Ծնորհալիի կաթողիկոսութեան յաջորդութիւնը, աշակերտները տարակույս չկայ որ ստոյգ պատմութիւնէն աւելի պատմական դէպքերու երեւոյթներով ուղեւորուեցան. վասնզի Լուսավորչի կաթողիկոսութեան շարունակութիւնը, բառին կանոնադիտական առումով, եթէ տեղի հետ կապուի, էջմիածնէն դուրս պէտք չէ ելլէ. իսկ եթէ կաթողիկոսական իշխանութեան փոխանցումի իմաստով պիտի առնուի շարունակութիւնը, այդ պարագային բոլոր կաթողիկոսներն ալ, որ Լուսավորչի կաթողիկոսութեան յաջորդութեան շղթան կը կազմեն, օրինաւոր կաթողիկոսներ են, առանց կապուելու տեղւոյ եւ ժամանակի:

«Պատմութեան այս լոյսերուն տակ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը աշխարհադրական եւ տեղագրական առումներով չի կրնար Ծնորհալիի յաջորդութիւնը ըլլալ, որովհետեւ Սիս չէ եղած Ծնորհալիի նստոցը» (Բարդէն Կաթողիկոս, անդ, էջ 17, 19):

Կիլիկեան Աթոռի դահակալներից ոմանք դժբախտաբար չեն ունեցել հայ եկեղեցու նուիրապետական կարգ ու սարքի, կանոնական դրութեան գիտակցութիւնը եւ «փառասիրութիւնից» մղումը փորձել են դուրս գալ իրենց իրաւասութիւնների շրջանակից, մոռանալ իրենց Աթոռի իշխանութեան սահմանները եւ ձգտել են իրենց ազդեցութեանը ենթարկել Մայր Աթոռի թեմերը, «Սսի Աթոռը փայլեցնելու նպատակով եւ այն նորէն Ամենայն Հայոց Աթոռ դարձնելու համար» (Օրմանեան): Նման արարքներ համարուել են բացայայտ հակականոնական եւ դատապարտուել: «Բազում իրիք» աշխատել են Կիլիկեան Աթոռի օրինազանց դահակալները «խափանել զկաթողիկոսութիւնն՝ էջմիածնայ», բայց հանգիստելով Մայր Աթոռի, Կ. Պոլսի Հայոց պատրիարքութեան, տղային-եկեղեցական իշխանութիւնների եւ ժողովրդի բուն հակահարուածին եւ զգալով, որ «ռինչ կարեն եւ խաղաղութիւն երկուց Աթոռոց եւս վրդովի, դադարեցան ի փանիցն անտի» (Հ. Մ. Չամչեան, անդ, էջ 491):

«Էջմիածնի մեծ Աթոռոյն եւ այդ մասնաւոր Աթոռոց մէջ խնդիր պէտք չէ լինի, քանի որ պաշտօնապէս Աղթամարայ եւ Սսոյ կաթողիկոսութեան յանձնատնին նստած եմար դահն ու Ամենայն Հայոց Աթոռոյն գլխաւորութիւնը ճանչ-

հարկէ երբեք Աղքատարայ եւ Սոյ կաթողիկոսներէն ոմանք հաստատեալ պայմանաց եւ կարգադրութեանց անաստեցին, իրենց գործը կը մնայ անօնական գործ. եկեղեցական եւ իրաւասական կանոնը անխախտ կը մնայ ցանկ ոմանց զանցառութեան մէջ» (*Մաղաքիա Արքեպս. Օրմանեան, «Աթոռ Հայաստանեայց», Վաղարշապատ, 1886, էջ 72-73*) :

Մայր Աթոռի Հաղորդագրութեան մէջ ճիշդ եւ յստակ ասուել է .

«Անցեալում կատարուած մի քանի անկարգութիւններ երբեք չեն կարող արդարացնել նոր անկարգութիւններ» :

«Եւ այս կէտին վրայ,—աւելացնում է Բարգէն Կաթողիկոսը,—կիլիկեցիք իրաւունք չունէին, որովհետեւ իրաց վիճակը փոխուած էր բոլորովին : Էջմիածին Մայր Աթոռ քանչցուած էր եւ ան իրաւունք ունէր պահանջել կիլիկիոյ Աթոռէն. որ իր սահմաններէն անդին չանցնի» (Բարգէն Կաթողիկոս, *անդ*, էջ 313) :

ԿԻԼԻԿԵԱՆ ԱԹՈՌԻ ՕՐԻՆԱԶԱՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Արեւ մի քանի խօսք Անթիլիասի շարագրանքի մէջ յիշատակուած կիլիկեան մի քանի կաթողիկոսների մասին, որոնք արպղէն կերպով օգտագործել են «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսը :

Այդ օրինակաց կիլիկեան կաթողիկոսներից առաջինը եղել է Սիմէոն Սերաստացին (1637—1648), որը փորձել է դուրս գալ իր իրաւասութեան սահմաններից եւ իր իշխանութիւնը տարածել Կիլիկիոյ սահմանակից՝ Մայր Աթոռի թեմերի եւ Հայաքնակ վայրերի վրայ, ու որպէս մի տեսակ «արդարացում» իր նոր անկարգութեանը, Փիլիպպոս Աղբակեցի (1633—1655) Ամենայն Հայոց Հայրապետին դրած իր թղթի սկզբնաւորութեան մէջ քառահարկէն դործածել է «Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ամենայն Հայոց, պատրիարք սրբոյ Աթոռոյն Երուսաղեմայ» տիտղոսները (Բարգէն Կաթողիկոս, *անդ*, էջ 315) :

Փիլիպպոս Կաթողիկոսն իր պատասխան թուղթը, որպէս «Ընդհանրական նամակ եւ քարտէշ» ուղղում է «առ ամենայն արմենակոյ խումբսն, որ յաշխարհս Կիլիկիա, ի Սիւս եւ ի Բերիա քաղաքի», այսինքն Կիլիկիայի ամբողջ ժողովրդին եւ հոգեւորականութեանը, եւ որի մէջ ձեռնհասօրէն եւ կորոյփ նախանձախնդրութեամբ պաշտպանում է Մայր Աթոռի դերազանութիւնն ու տիրախնամ թեմերը՝ եզրակացնելով, որ «մասունքն (իմա՝ կիլիկեան Աթոռը) ի հանուրն (իմա՝ Ամենայն Հայոց Հայրապետութեան մէջ) տեսանին, քայց ոչ հանուրն ի մասունս ... Ս. Էջմիածինն ստաք է, եւ Սիւսն՝ վերջին, Ս. Էջմիածինն գլուխ է, Սիւսն՝ մասունք» :

Մաղաքիա Արքեպս. Օրմանեանը Սիմէոն Սերաստացու հակադրանքական այս դիրքը իրաւացիօրէն դնահատում է որպէս «կիլիկեցիներու յաւակնոտ մեծամտութեան մերքընդ մերքը երևան եկող յայտարարութիւն, որ հերքուելու իսկ պէտք չունի, զի պատմական պարագաները շատ օրոշ են այդ մասին» (*Օրմանեան, «Ազգապատում», Բ, էջ 2447*) :

Այնուհետեւ երկու Աթոռների կանոնական յարաբերութիւնները բարելուում են 1651 թուականին Երուսաղէմի ժողովում, որը գումարուած է Զատիկից յետոյ Ս. Յակոբեանց մայրախնամ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Փիլիպպոս Աղբակեցու հրաւերով եւ նախազանգութեամբ, եւ որին մասնակցում են Սիւս ներսէս Սերաստացի Կաթողիկոսը (1648—1654), որը, որպէս խոհեմ եւ հեռաւեւ մարդ, զգում էր որ հնարաւոր չէր իր նախորդի՝ Սիմէոն Սերաստացու հակաթոռ մտայնութեամբ եւ մեթոդով կարգադրել վիճելի հար-

ցերբ, Երուսաղէմի Աստուածատուր պատրիարքը, 7 եպիսկոպոսներ, 18 վարդապետներ, 35 կրօնականներ, 60 քահանաներ եւ մեծ թուով իշխաններ եւ ժողովրդական ուխտաւորներ՝ մօտաւորապէս 1000 հոգի :

Երուսաղէմի ժողովը պատմական մեծ իրադարձութիւն էր հայ եկեղեցու այդ ժամանակի պատմութեան մէջ նրանով, որ առաջին անգամ կանոնական ղեկորի վրայ քննութեան էր առնուած Սսի կաթողիկոսութեան իրաւասութեան հարցը «Ընդհանուր արդարին հաւանութեամբ» (Օրմանեան, անդ, էջ 2457) :

Երուսաղէմի ժողովի գլխաւոր նպատակն է եղել՝ վերացնել երկու Աթոռների միջեւ անհասկացողութիւններն ու հակասութիւնը, «սէր եւ միաբանութիւն» հաստատել Մայր Աթոռի եւ Սսի միջեւ. «Հանուր ժողովն զումարեալ եկեղեցականք եւ աշխարհականք... միաբանութեամբ խոնարհեցան ի հրամանս Հայրապետին փիլիպպոսի եւ հաստատեցին կանոնական բանս երեքօրսան զյուխ» (Առաքել Դաւրիթեցի, «Պատմութիւն Հայոց», Վաղարշապատ, 1896, էջ 250) :

Ինչպէս երևում է Դաւրիթեցու վկայութիւնից, Երուսաղէմի ժողովի որոշումները կամ կանոնադիրը ստորագրում են երկու կաթողիկոսները, Երուսաղէմի պատրիարքը եւ ժողովի միւս մասնակիցները ու տանում իրենց հետ՝ որպէս պատմական-կանոնական կարեւոր փաստաթուղթ՝ նրանով առաջնորդուելու համար հետագայում, որպէսզի Սսի Աթոռի կողմից նոր անկարգութիւններ չպատահեն հայ եկեղեցու ծոցում :

Երուսաղէմի այս պատմական ժողովի որոշումների լոյսի տակ յստակօրէն երևում է դատապարտումը Սիմէոն Աերաստացի կաթողիկոսի ոտնձգողութիւնների ու տրոհոսամոյութեան :

Դժբախտաբար հետագայում էլ, հակառակ Երուսաղէմի ժողովի կանոններին եւ ոգուն, Սսի դահակայնիւրից ոմանք դարձեալ փորձում են ոտնձգողութիւններ կատարել Ամենայն Հայոց Հայրապետութեան իրաւասութեան սահմանների մէջ, եւ օգտագործել «Ամենայն Հայոց Կաթողիկոս» տիտղոսը : Այսպէս օրինակ՝ Միքայէլ Աջապահեանը (1737—1758), ոտնահարելով իջմիածնի եւ Սսի միջեւ կայացած սիրոյ եւ միութեան կանոնական դաշինքը, «ձգտում ունեցած ըլլալ իւր իրաւասութեան սահմանները ընդարձակելու, իջմիածնի հպատակ միժակներէն մաս մը իրեն վրայ դարձնելով, մնաւաւնդ որ բոլոր տանկաւայոց կաթողիկոս նանչցուիլ կ'ուզէր» (Օրմանեան, «Ազգապատում», Բ, էջ 3070) :

Սիմէոն Երեւանցի Ամենայն Հայոց Կաթողիկոսը (1763—1780) իր յայտնի «Ձամբո» գրքում երկու անգամ յիշատակում է Սսի այս հակաթոռ Միքայէլ Աջապահեան կաթողիկոսին՝ որպէս էջմիածնական թեմերից ներս ոտնձգողութիւններ կատարողի. «Նոյնպէս եւ յառաջն արարին օրհնեալ իշխանքն մեր (ակնարկում է Կ. Պոլսի ամիրաններին—ծնթ. խմբ.), որք ձայնակցեալք արքունական հրովարտակաւ հանին զնա (Միքայէլին) ի քաղաքէն եւ ի վիճակէն Էջմիածնի, զի մի եւս կոխեցէ զվիճակս Սրբոյ Էջմիածնի կաթողիկոսն Սոյոյ» («Ձամբո», Վաղարշապատ, 1873, ԺԲ, էջ 99) :

Կ. Պոլսի պատրիարքները եւ ամիրանները հետագայում էլ երբեք չաջդիւր չեն հանդիսացել Սսի դահակայնիւրից ոմանց նման ոտնձգողութիւններին, երբ փորձել են նրանք կանոնական, վարչական չփոթ ստեղծել եկեղեցու կեանքում : Նման դէպքերում Սսի օրինադանց կաթողիկոսներին «սատակ յանդիմանական գրեր գրուեցան», վկայում է Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեանը, («Հայրապետութիւն Հայոց եւ Ազգամար եւ Սիս», Կ. Պոլս, 1889, էջ 480—500) :

Յատկանշական է արձանագրել որ Կիլիկիան Աթոռի օրինագանց կաթողիկոսները երբ զործել են նման հակականոնական ոտնձգութիւններ կատարել Ս. Էջմիածնի թեմերի մէջ, նրանք սկսել են զործածել «Ամենայն Հայոց Կաթողիկոս» տիտղոսը, արգարացնել ջանալով իրենց անկարգ պարաքները :

ՊԱՀԵԼ ՍԻՍԸ ԷՋՄԻԱՄՆԻ ՀԱՄԱՐ

ԺԹ դարի 60-ական թուականներին Սսի Աթոռը շատ էր զրազեցնում Մայր Աթոռն ու Կ. Պոլսի Հայոց պատրիարքութիւնը՝ իր անկարգ զործուներով և նէսթեամբ :

1863 թուականից սկսած Արեւմտեան Հայաստանում մեր ազգային-եկեղեցական կեանքը դեկալարոււմ էր, ինչպէս ծանօթ է, Ազգային Սահմանադրութեամբ :

Այդի եւ եկեղեցու ցանկութիւնն էր, որ ամէնուրեք իշխեն օրէնքն ու իրաւունքը, պարտքն ու պարտականութիւնը :

Յատկապէս շատ տխուր պատկեր էին ներկայացնում, ըստ ժամանակակիցների վկայութեան, Սսի եւ Աղթամարի Աթոռները իրենց «անյուր և անխիղճ դաշխակչութիւններով, որոնք զործուեցան մօտ տասններորդ երկու մասնաւոր կաթողիկոսութեանց թեմերուն մէջ, յԱղթամար եւ ի Սիս, անարժան, եւ ի սպառ անարժան եկեղեցականաց միջոցով» (Թղթիւրիւան, անդ, էջ 631) :

Կ. Պոլսի Պօղոս Բ. Թաղթապեան Պատրիարքը Գէորգ Դ Ամենայն Հայոց Կաթողիկոսին է ներկայացնում «Աղթամարայ եւ Սսոյ խնդիրները ի անօրինութիւն» :

Բանի որ Ազգային Սահմանադրութեան մէջ չէին յիշատած Աղթամարի եւ Սսի Աթոռները, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով Կ. Պոլսում 1867-ին կազմոււմ է եկեղեցական մի մասնաժողով, որը պատրաստում է վեց յօդուածներից բաղկացած մի կանոնադրութիւն՝ մի անգամ ընդմիջտ կարգ ու կանոն հաստատելու համար Աղթամարում եւ Սսում :

Գէորգ Դ-ը հաստատում է այդ կանոնադրութիւնը եւ այն յանձնում Կ. Պոլսի Պատրիարքին եւ Ազգային Վարչութեան՝ ի զործադրութիւն :

Ըստ այդ կանոնադրութեան, Աղթամարի եւ Սսի կաթողիկոսների ընտրութիւնը ենթարկոււմ էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի վաւերացման եւ հաստատման, իսկ նրանց օծումը դարձեալ կատարոււմ էր Ամենայն Հայոց Հայրապետի ձեռքով : Սսի կաթողիկոսը համարոււմ էր «Կիլիկիոյ թեմակալ տաաջնորդաց գլուխ» եւ կամ «Վանահայր միճակաւոր» : Ամենայն Հայոց Կաթողիկոսը միայն իրաւունք ունի ստորագրել Կաթողիկոս Ամենայն Հայոց, իսկ Սսի եւ Աղթամարի կաթողիկոսների կոնդակները վերտառութիւնը պէտք է լինի Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, Կաթողիկոս Տանն Աղբամարայ, իսկ ստորագրութիւնը՝ Կաթողիկոս Սսի, Կաթողիկոս Աղբամարի :

Սսի եւ Աղթամարի Աթոռները համար կաղմուած այս կանոնադրութեան առթիւ Տ. Բարդէն Կաթողիկոսն անում է հետեւեալ խորհրդածութիւնը. «Ամենէն յարմար առիթն էր տալիս ազգային պատրիարքարանի համար, որ կորստով զործէր, յեցած Սահմանադրութեան եւ ցոյց տալ թուրք իսկ Հայոց մէջ զօրութիւն ունեցող Աթոռներուն թէ այլեւս կարելի չէր հին մտայնութեամբ եւ կերպերով զործել» (Բարդէն Կաթողիկոս, անդ, էջ 677) :

Այնուհետեւ Կ. Պոլսի ազգային ընդհանուր ժողովը, 1870-ից սկսած զրազոււմ էր րազոււմ անդամներ Աղթամարի եւ Սսի հարցերով :

Ազգային ընդհանուր ժողովը արձանադրում է՝ «Ս. Էջմիածնի Հայրա-

պետը Ս. Գրիգոր Լուսավորչի յաջորդն է եւ պերագահութիւնն ու ամբողջ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ կառավարութեան իրաւասութիւնը անորն է, իսկ Աղթամարայ եւ Սոսյ բեմակաւ կաթողիկոսներն եկեղեցական անիշխանութեանէն ծաղած են եւ ապօրինաւոր»:

Ազգային ընդհանուր ժողովի մի այլ նիստում Գրիգոր Օտեանն իր արտասանած պատմական ճառի մէջ արտայայտելով բոլոր ժողովականների մրտաժողովներն ու զգացումները, յատկօրէն նշում էր. «Ի՞նչ է այս Սոսյ կաթողիկոսութեան խնդիրը, ի՞նչ է իր նշանակութիւնը, տարածումը, հետեւանքը: Չայս իմանալու համար տեսնենք նախ թէ ի՞նչ է Էջմիածնայ կաթողիկոսութիւնը: Էջմիածնայ կաթողիկոսութիւնը համայն Ազգին, քէ ի Թուրքիա, քէ ի Ռուսիա, Պարսկաստան, Հնդկաստան եւ մինչեւ ի ծագս աշխարհի ուր Հայ մը կայ, բոլոր Հայերուն կաթողիկոսն է ու հոգեւոր զուխը... Մեծ եւ ազգային պատճառ մը կայ Էջմիածնայ յարելու համար. Էջմիածնայ կաթողիկոսը միայն հոգեւոր զուխն է, որ Ռուսիոյ Հայերը միացուցած է եւ կրնայ միացրնել Թուրքիոյ Հայերուն հետ: Եթէ Էջմիածնայ կաթողիկոսը մեր ալ կաթողիկոսն չլլայ, Ազգին երկու մեծ հատուածները կը բաժնուին իրարմէ:

Հիմա տեսնենք թէ ի՞նչ է Սոսյ կաթողիկոսը... Սոսյ կաթողիկոսը ուրիշ բան չէ, այլ Էջմիածնայ կաթողիկոսին հակառակ արողը: Թող ուրանայ ով որ կ'ուզէ իր այս յատկութիւնը. պատմութիւնը բարձրաձայն կը հռչակէ զայն: Հակառակութիւն, ուրեմն ապստամբ է... անպատուութիւն մը ազգին ու եկեղեցւոյն. ուրեմն պէտք է վերցնել զայն... Չէ՛, պէտք է պահել Սոսյ կաթողիկոսութիւնը, եւ զիտէ՞ք ինչու համար.— Էջմիածնի կաթողիկոսութեան համար: Եթէ Սոսյ կաթողիկոսութիւնը վերցնես, մեծ վնաս կը հասցնես Էջմիածնայ կաթողիկոսութեան»:

Սահմանադրական սերունդը Կ. Պոլսում, Օտեանի բաժնակցութեամբ, Սսի Աթոռը սկզբունքով հակաթոռ նկատելով հանդերձ, մտածում էր, որ նրա գոյութիւնը կարելի է պահպանել այն դէպքում, երբ այդ Աթոռը օգտակար լինի Ս. Էջմիածնի Մայր Աթոռին: Այս ոգով, այս՛, Կ. Պոլսոյ ազգային ժողովը պահպանեց Սոսյ Աթոռը, բայց ամէն անգամ որ այդ Աթոռը փորձեց իր սահմաններից դուրս ելնել, կամ ինչ որ չափով հակադրուել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, նոյն ազգային ժողովը կարգի հրաւիրեց Սոսյ Աթոռը եւ պարտադրեց չխախտել օրինականութիւնը:

1871 թուականին Խրիմեան Պատրիարքի նախադաշնութեամբ դումարուած սղգային ընդհանուր ժողովի որոշումով պատրիարքարանում կազմուած է մի այլ յանձնաժողով, որը մշակում է 7 յօդուածներից կազմուած մի ծրագիր՝ «Ծրագիր յարաբերութեանց Կիլիկիոյ կաթողիկոսական միճակին, ըստ ազգային կեդրոնական վարչութեան» անունով, որպէսզի Ազգային Սահմանադրութեան տրամադրութեան եւ Ազգային կենտրոնական Վարչութեան տրանսփորմութեան համաձայն կատարուի Սսի նոր կաթողիկոսի ընտրութիւնը:

Սսի «ամենապատիւ» կաթողիկոսին հրամայում է «յամենայն վերնագիրս կոնդակացն եւ յամենայն գրութիւնս ստորագրել Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, ընդ սմին ի բաց քողով զգործածութիւն մամուշակագոյն վեղարի եւ տարականոն ստորագրութիւն» (Իղմիրլեան, էջ 1887):

Ազգային Վարչութիւնը եւ Կ. Պոլսի պատրիարքարանը 1871-ին Սսի Մկրտչի Քէֆուկեան Կաթողիկոսի ընտրութիւնը հաստատելու համար նրա առաջ պայման են դնում «խոստումնադրով մը ընդունել Ազգային ընդհանուր ժողովի ընելիք կարգադրութիւնը Կիլիկիան Աթոռին ու Ազգային պատրիարքարանի յարաբերութեանց մասին, որպէսզի ճշդուի Կիլիկիոյ Աթոռին ու Կ. Պոլսի պատրիարքարանի յետ յարաբերութեան կերպը, ուրիշ խօսքով Ազգա-

յին պատրիարքարանի եւ Մայր Աթոռի գերիշխանութիւնը Կիլիկիոյ Աթոռի վրայ» (Բարպէն Կաթողիկոս, անդ, էջ 715-716) :

Յանուն Ազգային կենտրոնական Վարչութեան, Խրիմեան Պատրիարքը իր 1872 թուի Մարտ 10 թուակիր պաշտօնական գրութեամբ տեղեկացնում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին, թէ Կ. Պոլսի Ազգային երեսփոխանական ժողովը եւ Վարչութիւնը բարձր են պահել Մայր Աթոռի դերազահութեան բազմազանը, «առջեւն առած են Հայոց Ս. Եկեղեցւոյ միութեան եւ միասնութեան սպանացող վտանգին, Սոսյ անկախութեան սպառնացող դիրքը օրինաւոր սահմաններու տակ մոցցնելով, ապագայն իսկ ապահովելու յաջողած է», որովհետեւ աւելացնում է Գէորգ Դ-ին ուղղուած պաշտօնագիրը, «եւր կարողիկոսը սրն իւր խոստումագիրը դրժել եւ սահմանելի յարաբերութիւնը չընդունի եւ նոցա դէմ վարուի, անտարակոյս ամբաստանութեան տակ կ'իյնայ եւ ի պահանջել հարկին» մինչեւ անգամ կը դադրի իւր պաշտօնէն» (Իգմէրլեան, անդ, 937-941) :

Այս պայմանները ներքոյ է ընտրուած Մկրտիչ Քէֆսիզեանը, բայց ընտրութիւնից յետոյ դրժում է իւր խոստումը եւ իւր անկարգ ընթացքով «ի դերեւ Հանեց Համաձայնութեան ամէն ժողով» եւ փորձեց «խղի կապերը Մայր Աթոռի եւ Ազգային պատրիարքարանի հետ» (Բարպէն Կաթողիկոս, անդ, էջ 728, 1219) :

Քէֆսիզեանի մահից յետոյ Սահ Աթոռը 8 տարի (1894-1902) թափուր է մնում : Մայր Աթոռի, Կ. Պոլսի պատրիարքարանի եւ «բովանդակ Հայութեան սեւեռեալ մտահոգութիւնը դաժուած էր Կիլիկիոյ Աթոռի խնդրին եւ Կիլիկիոյ ժողովուրդի կացութեան» (Օրմանեան, «Ազգապատում», Գ, էջ 5139), որովհետեւ կառավարութեան գլխաւոր նպատակն էր ձգձգել ընտրութիւնը, սրել ընտրական պայքարը փառամոլ եկեղեցականների մէջ, Կիլիկիոյ Աթոռը հակադրել Մայր Աթոռին ու Կ. Պոլսի պատրիարքարանին եւ «Հայ ազգութիւնը երկուքի բաժնել եւ Կիլիկիոյ Համար նոր Հայ ազգութիւն մը կազմել» (Օրմանեան, Գ, էջ 5310) : Այս ձեւով Հայ ազգութիւնը երկուքի կը բաժնուէր եւ Կիլիկիոյ Համար նոր Հայ ազգութիւն մը կը կազմուէր» (Բարպէն Կաթողիկոս, անդ, էջ 777) :

Վերջապէս 1902 Հոկտեմբերի 12-ին ընտրուած է Սահակ Եպս. Խապահեանը, որպէս Կաթողիկոս Սահ :

Ազգային Վարչութիւնը ընտրական գործողութիւնները դանդաղ օրինաւոր, հաստատում է աղ ընտրութիւնը, այն մտածումով, որ Պատրիարքարանի կողմից նախապէս Կիլիկիոյ Աթոռին փոխանցուած «պայմանագիրը ընդունելի եւ գործողելի նկատուած է Խապահեանի կողմէ» (Օրմանեան, «Ազգապատում», Գ, 5307) :

Խրիմեան Հայրիկը Ս. Էջմիածնից շնորհաւորում է Խապահեանի ընտրութիւնը :

1903 թուականի Ապրիլի 20-ին Սաւմ կատարուած է Խապահեանի օծումը : Իր մատուցած առաջին Ս. Պատարագների մէջ Խապահեանը յիշում է Խրիմեան Հայրիկի անունը որպէս ընդհանրական Հայրապետի : Իր անդրաճիկ կոնդակում Խապահեանը դարձեալ յիշում է Ամենայն Հայոց Հայրապետին, յորդորում է ազգային «մասն կենաց եպիսկոպոսապետին Հայկազանց՝ Հայրապետին Ամենայն Հայոց եւ նախամեծար Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի» եւ յայտնում, որ երկու Աթոռների միջեւ մի շարք խնդրների պատճառով առաջ եկած անհասկացողութիւնները կը վերանան սիրով եւ միաբանութեամբ (Բարպէն Կաթողիկոս, անդ, էջ 846) :

Սակայն, պատրիարքարանի եւ Խապահեանի միջեւ շուտով ծագում է

դարձեալ «Աթոռի խնդիր մը, եւ անոր յաջորդեց իրաւասութեան խնդիր մը, որուն ի պատասխան . . . 18 յօդուածներէ բաղկացած դիր մը յանձնուեցաւ Սահակ Կաթողիկոսին» (Բարդէն Կաթողիկոս, անդ, էջ 885), որի երկու յօդուածները վերաբերում էին Ս. Էջմիածնի եւ Սահ. Աթոռի յարաբերութիւններին, իսկ միւս յօդուածները շօշափում էին Կ. Պոլսի պատրիարքարանի, Աղղային կենտրոնական Վարչութեան եւ Սահ. Աթոռի յարաբերութիւնները: Այս առթիւ Օրմանեան Պատրիարքը Խաղաքանին մի ընդարձակ նամակ է դրում «Իբրեւ յեմակէտ ունեցալով այն սկզբունքը, թէ Հայուրիւնը մէկ եկեղեցի է, եւ մէկ կեդրոն ու գլուխ կրնայ ունենալ, որ է Էջմիածինը, և տանկաւայուրիւնը մէկ ազգ է ու մէկ կեդրոն ու գլուխ կրնայ ունենալ, որ է Կ. Պոլիսը, որով Սիսը երկու տեսակէտով ալ պէտք էր երկրորդական նկատուէր եւ առաջնութեան ձգտումներ չունենար, որպէսզի եկեղեցւոյն և ազգին բաժանման առիթ տուած չըլլար» (Օրմանեան, Գ, էջ 5308):

Օրմանեան Պատրիարքին դրած իր 1906 թուականի Մարտ 21 թուակիր եւ 1907 թուականի Փետրուար 26 թուակիր նամակներով, Սահակ Կաթողիկոս Խաղաքանը «Մոլորական խնդիրներուն կը խառնէր նաեւ Կիլիկիոյ եպիսկոպոսներուն էջմիածնական միջնակաց մէջ աղատօրէն պաշտօնավարելու եւ Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուիլ կարենալու կէտերը, հակառակ նոյնիսկ Աղղային Սահմանադրութեան» (Օրմանեան, Գ, էջ 5310):

Սահակ Կաթողիկոս Խաղաքանն է որ փորձեց իր մի շարք կոնզակներում «օրինականացնել» «եպիսկոպոսապետ եւ կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ» տիտղոսի գործածութիւնը:

1907 թուականի Փետրուար 26 թուակիր նամակով Խաղաքանը այս մասին գրում էր Օրմանեան Պատրիարքին. «Իսկ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅՐ Կիլիկիոյ Աթոռին վրայ փոխադրող մենք, այլ մեզմէ առաջինները, ուստի այդքան նուիրական եւ պատմական յիշատակ մը Զնձել Մեր իրաւասութիւններէն չառ վեր է: Ապահով թող ըլլայ Պատկ. Վարչութիւնը, որ ՈՉ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅՐ և ՈՉ Կիլիկիոյ ՏԱՆ ՄԵՆ մակդիրը կրնան Մեր մէջ յաւակնութիւնը յառաջ բերել, կարծելու համար թէ Մայր Աթոռոյ Հայրապետը ընդհանրական ըլլալու իրաւունքէն կապտուած է, հետեարար թիւրիմացութիւն ատեղծելու փափաքողներուն տուած մեկնութիւնը Մեզ համար կարեւորութիւն և նշանակութիւն չունի» (Բարդէն Կաթողիկոս, անդ, էջ 906):

Օրմանեան Պատրիարքի, Կ. Պոլսի Աղղային Վարչութեան եւ Մայր Աթոռի միջեւ ծագած այս հարցերի առիթով, որպէս Գերագոյն Դատաւորի եւ Վերադիտողի, Խաղաքանը դիմում է պաշտօնապէս նաեւ Խրիմեան Հայրիկին, «ասոր օգնութեամբ եւ հեղինակութեամբ Կ. Պոլիս Աղղային Վարչութիւնը ճշդելու: Խրիմեան սահայն չէր կրնար եկեղեցական կանոններէն եւ աղղային պահանջներէն հեռանալ, մանաւանդ որ Խաղաքան չէր քաջուած նոյնիսկ Մայր Աթոռը միբաւորող կէտեր առջեւ դնել. . . եւ հարկաւ այս էր պատճառը, որ Խաղաքանի դիմումները անպատասխան կը մնային» (Օրմանեան, Գ, էջ 5314):

1907 թուականի Ապրիլի 26-ին Խրիմեանը վերջնապէս պատասխանում էր Խաղաքանին եւ թելադրում՝ չհեռուել «Սնարիալ եւ ոչ էական խնդրոց եւ վեհանձնութեամբ նայել յարտաքին ձեւակերպութիւնս. . . պայքար մղել միայն ընդդէմ միասարկ խոչընդոտաց», աշխատել «դատաւարականութեան Հայ մանկւոյն, բարձրացուցանել զբարոյական անկեալ միջնակ Ժողովրդեան դատաւար եւ լուսաւորել զմիտս նոցա, եւ համեմալ եղբայրութեամբ կենցաղավարիլ» (Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վերաբերեալ պատճէններ 4 եր. 54, նաեւ Օրմանեան, Գ, էջ 5314-5315):

ԿԻՆԿԵԱՆ ԱԹՈՌԸ ԱՆԹԻԼԻԱՍՈՒՄ

Կիլիկեան Աթոռից ներս, ի շահ եկեղեցու եւ Հայ ժողովրդի, օրինականութիւն եւ կարգ ու կանոն հաստատելու Մայր Աթոռի, Կ. Պոլսի պատրիարքարանի եւ Ազգային կենտրոնական Վարչութեան ջանքերը ընդհատուած են երկրում տիրող 1908—1917 թուականներին քաղաքական, ողբերգական վերելայրուածներէ հետեւանքով, ինչպիսիք էին Ազանայի կոտորածը 1909-ին, Առաջին Համաշխարհային Պատերազմը 1914-ին, Ազրիլեան եղեռնը ու տարադրութիւնը 1915-ին, եւ թուրքիայում Ազգային Սահմանադրութեան վերացումը:

1921 թուականին դատարկուած էր Կիլիկիան Հայ ազգայնակալութիւնից: Սահակ Կաթողիկոսն էլ «անդարձ մեկնեցաւ Ազանայէն» (Բարդէն Կաթողիկոս, անդ, էջ 274): Կիլիկեան Աթոռը դարձաւ դադիական ու թափառական: Սաի Աթոռը կորցրեց իր սաքի տակի հողը: Օրակարգի վրայ էր դրուած Սաի Աթոռի լինել եւ չլինելու հարցը: Զկար Կիլիկիան: Ի՞նչ պէտք է լինէր հաստատելու Կիլիկեան Աթոռի:

1928 թուականի Փետրուարին Սահակ Խապանան Կաթողիկոսը դրուած է իր «Կտակ»-ը, որն իրապէս «կտակ մը ըլլալէ աւելի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տեւականութեան մեղձաւանջն էր» (Բարդէն Կաթողիկոս, անդ, էջ 995):

Կային մարդիկ, որոնք մտածում էին, թէ Կիլիկիայից դուրս իմաստունի պահել Կիլիկեան Աթոռը եւ «աւելորդ է Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Սուրիոյ մէջ, քանի որ Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը, իրեն դարաւոր Աթոռ, կրնայ ինքն ստանձնել Սուրիոյ Հայութեան եկեղեցական գործերու ղեկավարութիւնը» («Սիւն», 1929, էջ 132):

Ուրիշներ, որոնց թւում նաեւ Սահակ Կաթողիկոսը, աւելի կանոնական էին դառնում Կիլիկեան Աթոռի միացումը «Ընդհանրական Հայրապետութեան»: Կային նաեւ ուրիշներ, որոնք «քանաւոր ու օրինական կը դառնէին աթոռակցի մը օծումը» («Կտակ»):

Այդ ծանր օրերին կիլիկեան պանդուխտ Աթոռի գոյութեան եւ տեւականութեան մտահոգութիւններով էր զբաղուած նաեւ Մայր Աթոռը:

1924 թուականից Գէորդ Ե-ի եւ Սահակ Կաթողիկոսի միջեւ սկսում է թղթակցութիւն Կիլիկեան Աթոռի Սիրիայում եւ կամ Լիբանանում վերահաստատման միջոցառումներին մասին: Սահակ Կաթողիկոսը անհրաժեշտ էր զրուում այդ մասին իմանալ Ամենայն Հայոց Հայրապետի «իմաստուն տեսութիւնը եւ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի կարծիքը» («Էջմիածին», 1968, թիւ Ա, էջ 34):

Մի շարք նամակագրութիւններից յետոյ, Կիլիկեան Աթոռի վերահաստատման հարցով 1928 թուականի Դեկտեմբեր 25 թուակիր նամակով Մայր Աթոռը, յանուն Ամենայն Հայոց Հայրապետի, լիազօրում է Եպիպոսաշոյց առաջնորդ եւ Մայր Աթոռի նուիրակ Տ. Թորգոմ Արքեպս. Գուշակեանին՝ զրնալ Երուսաղէմ եւ անձամբ Տ. Եղիշէ Դուրեան Պատրիարքին յանձնել Գէորդ Ե-ի պաշտօնական գրութիւնը՝ «իմանալու նորա անձնական կարծիքը ու գեղուցելու Վեհափառ Հայրապետին, ... ի նկատի ունենալով միայն Սիրիայի Հայութեան ազգային-կրօնական, եկեղեցական-վարչական գործերի կազմակերպումը ու վարչաձեւի միութիւնը» («Էջմիածին», 1968, թիւ Ա, էջ 35):

Նոյն օրը եւ նոյն հարցի շուրջ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ Տ. Խորէն Արքեպիսկոպոսը, յանուն Գէորդ Ե-ի, գրում է Երուսաղէմ՝ Տ. Եղիշէ Պատրիարք Դուրեանին, որ «մենք միանգամայն անհրաժեշտ եւ անյետա-

ձգելի ենք համարում Սիրիոյ Հայոց թեմերի չուսափոյթ եւ լաւ կազմակերպումը»։ Նոյն նամակում թելադրում էր, ըստ Սահակ Կաթողիկոսի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին կատարած խնդրանքի, որ «Երուսաղէմի ամենապատիւ պատրիարքը հաճէր Պէյրութի մատուռը յարակից տեսչական բնակարանով եւ Դամասկոսի եկեղեցին առժամանակեայ մեղ յանձնել» («Էջմիածին», անդ, էջ 35)։

Այս առթիւ Սահակ Կաթողիկոսը երախտադրութեամբ զրում էր Մայր Աթոռ՝ Կիլիկիոյ եւ Երուսաղէմի Արքեպիսկոպոսին եղբայրական համաձայնութիւնը միայն սրբազան Հայրապետի օրինալիք միջնորդութեամբ գլուխ կրնայ զայլ» («Էջմիածին», անդ, էջ 34)։

Այնուհետեւ, Մայր Աթոռի յանձնարարութեամբ, 1929 թուականի Ապրիլի 30-ին Երուսաղէմ է մեկնում Տ. Թորոյում Արքեպիսկոպոսը, «Դուրեան Պատրիարքին յանձնելու համար Մայր Աթոռէն յղումը կարեւոր զրութիւններ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սուրբոյ մէջ կազմակերպումը զիւրացնելու» եւ Երուսաղէմապատկան եկեղեցիները «առժամանակեայ» կերպով Կիլիկեան Աթոռին յանձնելու համար (Ա. Արքեպիսկոպոս, «Թորոյում Պատրիարք Գումշակեան», Գահիրէ, 1940, էջ 498)։

«Երբ Երուսաղէմ հասայ — զրում է Թորոյում Արքեպիսկոպոսը, այդ հարցերը կարգադրուած էին արդէն Ամենայն Հայոց Սրբազնագոյն Հայրապետին փափաքին համաձայն» («Սիոն», 1929, էջ 160)։

Այս ձեւով վերակազմում էր կիլիկեան Աթոռը Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ եւ Զանգերով եւ համազգային օժանդակութեամբ։

Ուղեցինք մի պահ կանգ առնել կիլիկեան Աթոռի Սիրիայում եւ ապա Լիբանանում վերահաստատման պատմութեան վրայ, ցոյց տալու համար Անթիլիասի նոր շարադրանքի զրպարտչական բնոյթը։ Ճշմարտութիւնն այն է, որ Մայր Աթոռը երբեք չի պայքարել Սսի Աթոռի եւ նրա զահակալների դէմ, եւ երբեք չի ցանկացել անշքացնել այդ Աթոռը եւ այն վերածել «պարզ մանահայրութեան»։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը 1968 թուականի Նոյեմբեր 21 թուակիր Տ. Տ. Խորէն Կաթողիկոսին զրած Իր նամակում շեշտում էր. «Այստեղ գուցէ յիշենք աւելորդ անգամ մը եւս, թէ Մայր Աթոռը երբեք չէ մտածած եւ չի մտածեր որեւէ չափով տկարացնել Կիլիկեան Աթոռը կամ սահմանափակել անոր իրաւասութիւնները եւ ներքին ինքնավար ղեկավարութիւնը։ Մենք անշեղ կերպով կը հետեւինք մեզ նախորդող Հայրապետներու օրինակին եւ կը յարգենք ձեր Աթոռին իշխանութիւնը Լիբանանի, Սուրիոյ եւ Կիպրոսի բնակչութեան վրայ» («Էջմիածին», 1970, թիւ 2-է, էջ 16)։

Ա Ն Թ Ի Լ Ի Ա Ս Ն Ա Յ Ս Օ Ր

Տեսնում ենք ահա, թէ ինչպէս սահմանադրական սերունդը իր ծամանակին, այնպէս էլ Մայր Աթոռն ու Ամենայն Հայոց Հայրապետը այսօր, մտածում են նոյն ձեւով. «Սսի Կաթողիկոսը պէտք է մնայ իրրեւ կաթողիկոս, այլ որչափ կարելի է, պէտք է վերնայ իրրեւ հակառակաթոռ։ Ոչ միայն մասնորէ զայնապատկան ու անպատկան միւս միւս է, այլեւ մասնորէ օր մը վտանգաւոր կրնայ ըլլալ» (Իզմիրեան, անդ, էջ 823-842)։

Այսօր սակայն, Անթիլիասը կիլիկեան Աթոռի անունով, ճիշդ հակառակ ուղղութեամբ է գործում, այսինքն, մնաստկար լինում Մայր Աթոռ Ս.

Էջմիածնին, ամէն կերպ փորձում է յափշտակել Մայր Աթոռի թեմերը, փորձում է քանդել սփիւռքի Հայութեան հոգեկան կապը Ս. Էջմիածնի հետ եւ տրկարացնել նրա հեղինակութիւնը արտասահմանի մեր պանդուխտ ժողովրդի հոգեւոր-ազգային գիտակցութեան մէջ: Նոյն Անթիլիասը փորձում է նաեւ դործել Մայր Աթոռի հեղինակութեան դէմ, միջկեղեցական-միջազգային կեանքում:

Այս՝ դժբախտաբար, այսօր Անթիլիասի Աթոռը մնասական է դարձել Հայ եկեղեցու եւ Հայ ժողովրդի համար, իր անկարգ արարքներով, իր պառակտիչ հակազգային դործունէութեամբ: Անթիլիասի հրապարակած վերջին շարադրանքը անհերքելի մի նոր ապացոյց է այդ մնասարեւ քաղաքականութեան հետապնդման:

Ի տես այս ողբերգական վիճակին, Հայ հաւատացեալը մղում է հարց տալու՝ ինչո՞ւ այս բոլորը: Մինչեւ 1956 թուականի դրութեամբ ու վիճակով Անթիլիասի Աթոռը ինչո՞վ էր սահմանափակուած եւ ի՞նչ չափով իրաւադրուած կամ անչքացած, որ յետոյ, իրրեւ անհրաժեշտութիւն, նա փորձէր իր իշխանութիւնը տարածել Մայր Աթոռի թեմերից ներս՝ պառակտել իրաւիճակ ստեղծելով սփիւռքի գրեթէ ամբողջ տարածքի վրայ: Ո՞վ ի՞նչ չահեց Անթիլիասի այս վերջին տարիների օրինազանցութիւններից: Եւ արդեօք խելքը գլխին Հայ մարդ կա՞յ, որ այս իրաւիճակի մէջ տեսնի իրապէս կրիկեան խոկ Աթոռի շահը: Անթիլիաս փաստօրէն կտրուած է այն ճիւղը, որի վրայ ինքն էլ կանգնած է:

Ուրեմն, 1956 թուականից սկսած, Անթիլիասի կրիկեան Աթոռը դուրս գալով «Իր ամբիւրջ», այսինքն՝ տեղական Աթոռի իր հանդամանքից, դարձեալ այնպիսի մեր եկեղեցին ու ժողովուրդը:

Դեռեւ 1956 թուականից սկսած Անթիլիասի տաղանադի խաղաղ ու դրական լուծմանը նուիրուած Մայր Աթոռի եւ անձամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ջանքերը, յորդորները, խաղաղասիրական կոչերն ու հաշտութեան առաջարկները, որպէսզի Անթիլիասի Աթոռը մնայ իր սահմանների մէջ, իր հոգեւոր, ազգային առաքելութեան բարձրութեան վրայ եւ իր օղտակար նպատար բերի մեր ժողովրդի հոգեւոր ապահին՝ Հայ եկեղեցու նուիրապետութեան ծոցում, օրինականութեան եւ համեմատելի դործակցութեան պայմաններում:

Մանաւանդ 1963 թուականի Հոկտեմբերի 26-ին Երուսաղէմի ողջագուրումով Մայր Աթոռը գերազոյն ապացոյցը տուց իր բարի կամեցողութեան եւ իր լուստեսութեան, ընդառաջելով Անթիլիասի պահանջին, որ Տ. Տ. Թորէն աթոռակալին կաթողիկոսական ճանաչում տրուի առանց պայմանի:

Երուսաղէմի ողջագուրումով Մայր Աթոռը յոյս ունէր, որ նոր էջ կը բացուի մեր ազգային-եկեղեցական կեանքում՝ պատմականօրէն նուիրագործուած իրաւասութեանց սահմանների յարգումով, եւ այդ ողջագուրումը կ'արմատանայ մեր կեանքում ու կը դառնայ հոգեւոր միութեան, եկեղեցական եւ ազգային դործունէութեան խաբիս:

Աւա՛ղ, սակայն, նոր յուսախարութիւններ էին ապաստւում Մայր Աթոռին: Անթիլիասի Աթոռը եւ անձամբ նրա արդի դահակալը 1963 թուականից անմիջապէս յետոյ անկարգ ու պառակտիչ նոր արարքներ գործեցին, որոնց հետեւանքով «պաղ երկաթի հալումը զգացինք մեր սրտին մէջ», գրում է Վեհափառ Հայրապետը պատկերաւոր արտայայտութեամբ, գործեր, որոնք

միաժամանակ «գլուխ գլխի կը գարնուին Երուսաղէմի ողջագուրման ռզու հետ եւ նոր դուռ կը բանան Երկաթապատուած եւ խռովութեան» :

Արդարեւ, 1963 թուականից յետոյ, Անթիլիասի այդ անկարգ դործերից եղան՝

1. Տ. Տ. Խորէն Կաթողիկոսի կողմից անթիլիասական մի եպիսկոպոսի նշանակումը Մարսելի թեմում, առանց Ամենայն Հայոց Հայրապետի դիտութեան եւ Համաձայնութեան :

2. Երկու Աթոռների Հաւասարագորութեան նորարոյս մի տեսութեան հրապարակումը :

3. «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսի դործածութիւնը :

4. 1965 թուականի Կիլիկեան Աթոռի նոր կանոնագրութեան մէջ 32 եւ 33 յօդուածների ներմուծումը :

5. Ունեւորութիւն Կարակասի Հայ Համայնքի ծոցում :

6. Ամենայն Հայոց Հայրապետի վճիռով կարգադրել արուած մի ուխտադրութ քահանայի վերականգնումը եւ քահանայութեան պաշտօնի կոչուելը Անթիլիասի իշխանութեան ներքոյ :

Ահաւասիկ հետեւանքը, Անթիլիասի զահակալի՝ Երուսաղէմում տրուած հանդիսաւոր խոստումների :

Այս պայտաններում, որքա՞ն անհամոզիչ է հնչում Անթիլիասի խօսքը Հայ եկեղեցու ներքին միութեան, եղբայրութեան եւ սիրոյ մասին, երբ միւս կողմից դործնապէս նա ճիշդ հակառակ ուղղութեամբ է դործում : Անթիլիասի խօսքը, սակայն, «առանց դործի մնում է կեղծ եւ մեռեալ» :

ՄԵՐ ՕՐԵՐԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Այսօր մեր պանդուխտ ժողովուրդի հիմնական հարցը, մեր ժամանակների հրամայականը, մեր եկեղեցու ներքին միութեան եւ նուիրապետական բոլոր Աթոռների միջեւ համերաչիս դործակցութեան վերահաստատման հարցն է, որպէսզի Հայոց սուրբ եկեղեցին իր ազգապահպանման պատմական առաքելութիւնը կարողանայ շարունակել միացեալ ճիղերով եւ առաւել արդիւնաւորութեամբ :

Անթիլիասը, վերջին տարիների իր մակերեսային եւ անհեռաւոր քաղաքականութեամբ, արդեւակում է այդ առաքելութիւնը :

Բոլոր ճամբարիտ Հայերը քաջ գիտեն, որ Համայն ազգի զերազոյն սրբութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է, ամուր խարսխուած Հայրենի հողի վրայ, Արարատի դիմաց, Ս. Լուսաւորչի իսկ ձեռքով : Ո՞վ շահ է որոնում այդ սրբութեան զգացումը ակարացնելու մէջ :

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնութեան ներքոյ, սփռութեամբ Հայ եկեղեցու նուիրական առաքելութիւնն է մանաւանդ այսօր, Հայութիւնը Հա՛յ պահել, վերկել նրան մոլորեցուցիչ ազդեցութիւններից ու դարձնել նրան մի ամբակուտ, միասնական ամբողջութիւն իրրեւ եկեղեցի :

Այդ նուիրական աշխատանքը հնարաւոր կը լինի, այո՛, առաւել արդիւնաւորութեամբ կազմակերպել, եթէ յարգուի մեր եկեղեցու նուիրապետական կառույցի մէջ օրինական միութեան սկզբունքը եւ եթէ վերականգնուի աւանդական կարգապահութիւնը եւ համերաչիս դործակցութիւնը նուիրապետական Աթոռների միջեւ :

Միայն աշտպիտի պայմանների մէջ Անթիլիասի Աթոսը, պահելով իրեն վերապահուած տեղը, զիրքը եւ իշխանութեան սահմանները Հայ եկեղեցու նուիրապետական կառույցի մէջ, պիտի կարողանայ իր շինարար, օգտակար առաքելութիւնը կատարել, հոգեւոր եւ ազգային իմաստով:

Այս ցանկալի եւ օրինական իրաւիճակին հասնելու համար է, որ Ամենայն Հայոց Հայրապետը իր 9 Հոկտեմբեր 1972 թուակիր նամակում յորդորում էր Անթիլիասի Գահակալին, որ անդրադառնայ ցարդ կատարուած սրբալիներին եւ յարդուն հետեւեալ առաջադրանքները.

Ա.— Անթիլիասի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոսը բնղունի կանոնական եւ պատմութեամբ նուիրադործուած Հայաստանեայց եկեղեցու միութեան սկզբունքը, հոգեւոր վերին իշխանութեանը ներքոյ Ամենայն Հայոց Կաթողիկոս—Պատրիարքի:

Բ.— Անթիլիասի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոսը յարզի Հայ եկեղեցու նուիրապետական Աթոռները իրաւասութեանց սահմանները:

Գ.— Անթիլիասի Կիլիկեան Աթոսը յանձն առնի Մայր Աթոս Ս. Էջմիածնի իրաւասութեան վերադարձնել Իրանի, Յունաստանի եւ Միացեալ Նահանգաց թեմերը եւ Կարակասի համայնքը:

Դ.— Միջեկեղեցական կաղմակերպութիւնների եւ համաժողովների մէջ Հայ եկեղեցին ներկայացուի միացեալ մի պատուիրակութեամբ:

Ե.— Անթիլիասի Կիլիկեան Աթոսը յարզի սկզբունքը որ Ամենայն Հայոց Կաթողիկոս—Պատրիարքի պատժական կամ կարգաւումժան վճիռները վերջնական են եւ պարտադիր Հայ եկեղեցու նուիրապետական բոլոր Աթոռների եւ թեմերի համար:

Անթիլիասը պէտք է իսպառ հրաժարուի «Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն» լինելու իր յաւակնութիւններից ու մտնի Հայ եկեղեցու օրէնքի եւ կարգի ծիրի մէջ, մտնի Հայ եկեղեցու իսկական, կանոնական միութեան մէջ: Դրանով նա աւելի՛ կը զօրանայ, է՛լ աւելի լայն չափով իր նպաստը կը բերի եկեղեցու հոգեւոր սպասին եւ ազգի ծառայութեան գործին:

Այս դէպքում եւ ա՛յս պայմաններում, այո՛, Մայր Աթոսի գլխաւորութեամբ, բովանդակ Հայութիւնը բարոյապէս, նիւթապէս զօրավիզ կը կանգնի Կիլիկեան Աթոռին:

Այս ձեւով եւ միայն ա՛յս ձեւով Անթիլիասը կարող է արդարացնել իր զոյտութիւնը Հայ եկեղեցու նուիրապետութեան ծոցում՝ հաւատարիմ մնալով իր իսկ օրինապահ դահակալներին:

Մայր Աթոսը, Հայոց Հայրապետը ա՛յդ է, որ կը պահանջեն Անթիլիասի Աթոռից: Եւ այդ ո՛չ միայն անհրաժեշտ է, այլ նաեւ հնարաւոր եւ ցանկալի:

«Էջմիւթիւն» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ